

ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԴիաԷմ ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2022/16-10-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված Էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում
Ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի			
	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	XFe96 Analyzer	Seahorse XFe96 Analyzer	Agilent Technologies	<p>Անալիզատորը թույլ է տալիս չափել միտոքոնդրիալ շնչառության և գլիկոլիզի ինտենսիվությունը՝ ստանալով ֆունկցիոնալ տվյալներ կենդանի բջջի նյութափոխանակության վերաբերյալ 96-խցիկային պլանշետում իրական ժամանակում: Անալիզատորը չափում է կենդանի բջիջներում թթվածնի սպառումը (OCR) և արտաբջջային թթվեցումը (ECAR): Հիմնական բնութագրիչներն են. Սարքն ունի ներմուծման համակարգի 4 մուտք և ավտոմատ խառնելու հնարավորություն, ինչը թույլ է տալիս գնահատել բջիջների պատասխան ռեակցիան տարբեր սուբստրատներին, արգելակիչներին և այլ ազդանյութերին իրական ժամանակում: Սարքը հնարավորություն է տալիս աշխատել առանց որոշվող նյութի ներկման, էքստրակցիայի և նմուշը վնասող</p>

Նախնական մշակման: 96-խցիկային պլանշետային
ֆորմատը թույլ է տալիս մշակել մեծ և
Նյութափոխանակային առավել մեծ ակտիվություն
ունեցող նմուշները: Նյութափոխանակության
արագության հաշվետվությունը ստացվում է թույլների
ընթացքում առանց սարքից նմուշի հեռացման և դրա
ներկման: Բարձր զգայունությունը թույլ է տալիս
օգտագործել ընդամենը 5000 հատ բջիջ 96 տեղանոց
պլանշետի յուրաքանչյուր խցում: Ճշգրտորեն
կառավարվող տաքացման համակարգը պահպանում է
նմուշի ջերմաստիճանը 16-42 °C տիրույթում՝ տարբեր
աղբյուրներից մեկուսացված նմուշների
համատեղելիության համար (սենյակային
ջերմաստիճանից առնվազն 12-20 °C բարձր): Wave
ծրագրային ապահովումը հնարավորություն է տալիս
համակարգչում հեշտորեն ստեղծել փորձարկման
արդյունքների արձանագրություններ և վերլուծել
տվյալները, ինչպես նաև կցել ստացված արդյունքները
Էլեկտրոնային աղյուսակների և գրաֆիկական
ծրագրերի հետ: Հոսանքի ուժ՝ 9A Վերլուծության
հնարավորություններ՝ մեծ նմուշներ Աշխատանքային
ծավալը՝ 150 - 275 մկ/խցիկ Փորձարկվող նմուշների
քանակը՝ 92 Կոմունիկացիա՝ TCP/IP, USB, անլար
Վերահսկիչի նկարագիրը՝ համակցում Windows 10 (64
bit) ծրագրով համակարգչի և սենսորային Էկրանի 1920
մմ x 1680 մմ հետ, 16 ԳԲ հիշողությամբ, կոշտ
սկավառակ 500 ԳԲ, ամբողջական վերլուծության
դիզայնով, վերահսկման և անալիզի կարողությամբ
Վերահսկիչի սենսորային Էկրան՝ առկա է Վերահսկիչի

			<p>միացման տեսակ՝ լարով միացում Չափսերը՝ 43 սմ x 61 սմ x 41 սմ Ներարկման կետերի քանակը՝ յուրաքանչյուր խցիկի համար 4 Հիշողությունը՝ 16 GB Միկրոխցիկի ծավալը՝ 2.8 մկլ Շրջակա միջավայրի հարաբերական խոնավությունը՝ 20-80 % Շրջակա միջավայրի ջերմաստիճանը՝ 4-30 °C Աշխատանքային լարումը՝ 100-240 VAC Նմուշի պահանջները՝ 5,000 - 500,000 բջիջ/խցիկ Նմուշի ջերմաստիճանը՝ 16-42 °C Ծրագրային ապահովումը՝ Wave վերահսկիչ, Windows 10 Enterprise, Wave Desktop-ի համար անսահմանափակ օգտագործման թույլտվություն Ներարկման ծավալը՝ 25 մկլ Քաշը՝ 23 կգ Սարքը նախատեսված է միայն հետազոտական և ոչ ախտորոշիչ աշխատանքների համար: Սարքի հետ մեկտեղ պետք է տրամադրվի 1000 որոշման համար նախատեսված ռեագենտների ամբողջական հավաքածու: Սարքավորման տեղադրումն ու ուսուցումը կատարվում է արտադրողի սերտիֆիկացված ճարտարագետի կողմից: Երաշխիքային ժամկետ՝ 730 օրացուցային օր:</p>
--	--	--	---

